ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 34-Լ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ, ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԱՆՑՆՈՂ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի N 270-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. Հաստատել հասարակական կարգի պահպանման և հասարակական անվտանգության ապահովման աշխատանքներում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ուսումնական հաստատության սովորողների, վերապատրաստում անցնող ծառայողների ներգրավման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

«15» 09 2023 թ.

ք. Երևան

Հավելված
ՀՀ ներքին գործերի նախարարի
«15». 09. 2023թ. թիվ 34-Լ հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ, ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԱՆՑՆՈՂ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ուսումնական հաստատության (այսուհետ՝ ուսումնական հաստատություն) սովորողներին, վերապատրաստում անցնող ծառայողներին հասարակական կարգի պահպանման և հասարակական անվտանգության ապահովման աշխատանքներում ներգրավելու հարաբերությունները:

2. Սույն կարգի դրույթները տարածվում են ուսումնական հաստատության պետական պատվերի շրջանակներում ուսուցման սովորողների, հեռակա ուսուցման ոստիկանության ծառայողների, ինչպես նաև լրացուցիչ կրթական ծրագրով վերապատրաստում անցնող ոստիկանության ծառայողների վրա:

3. Ուսումնական հաստատության պետական պատվերի շրջանակներում ուսուցման սովորողները (այսուհետ՝ սովորող) և (կամ) հեռակա ուսուցման, լրացուցիչ կրթական ծրագրով վերապատրաստում անցնող ոստիկանության ծառայողները հասարակական կարգի պահպանման և հասարակական անվտանգության ապահովման աշխատանքներում ներգրավում են ՀՀ ներքին գործերի նախարարի՝ տվյալ բնագավառը համակարգող տեղակալի գրավոր հանձնարարականի հիման վրա:

4. ՀՀ ներքին գործերի նախարարի՝ տվյալ բնագավառը համակարգող տեղակալի գրավոր հանձնարարականն ստանալուց հետո ուսումնական հաստատությունը ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչություն է ներկայացնում սովորողների ցուցակը, ովքեր ենթակա են ներգրավման

հասարակական կարգի պահպանման և հասարակական անվտանգության ապահովման աշխատանքներում:

5. ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչությունն ուսումնական հաստատությանը գրավոր իրազեկում է ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության կառուցվածքային այն ստորաբաժանման (ստորաբաժանումների) և ժամկետի վերաբերյալ, որոնց կազմում սովորողներն ընդգրկվելու են հասարակական կարգի պահպանման և հասարակական անվտանգության ապահովման աշխատանքներում:

6. Ուսումնական հաստատությունը, գրավոր իրազեկվելուց հետո, պարտավոր է ապահովել սովորողների սահմանված ժամկետներում և պատշաճ ներկայանալը տվյալ ստորաբաժանում:

7. ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանումը, որի կազմում ընդգրկվել են սովորողները, պարտավոր է ստուգել նրանց ներկայությունը, իրականացնել հրահանգավորում, պատշաճ հսկողություն, ահրաժեշտության դեպքում՝ կազմել ծառայության ժամանակացույց, իսկ հասարակական կարգի պահպանման և հասարակական անվտանգության ապահովման աշխատանքներում սովորողների ինքնուրույն մասնակցության դեպքում՝ ոստիկանության փորձառու ծառայողներից նշանակել ղեկավար:

8. ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանումը հասարակական կարգի պահպանման և հասարակական անվտանգության ապահովման աշխատանքներում սովորողների ներգրավման ավարտի մասին իրազեկում է ուսումնական հաստատությանը:

9. Այն դեպքում, երբ ՀՀ ներքին գործերի նախարարի՝ տվյալ բնագավառը համակարգող տեղակալի գրավոր հանձնարարականը ներառում է հեռակա ուսուցման և (կամ) լրացուցիչ կրթական ծրագրով վերապատրաստում անցնող ոստիկանության ծառայողներին հասարակական կարգի պահպանման և հասարակական անվտանգության ապահովման աշխատանքներում ներգրավելու մասին նշում, ապա ուսումնական հաստատությունը դադարեցնում է վերոնշյալ ոստիկանության ծառայողների ուսումնական պարապմունքները, իսկ նշված ծառայողները վերադառնում են մշտական ծառայության վայրի՝ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանում:

10. Հասարակական կարգի պահպանման և հասարակական անվտանգության ապահովման աշխատանքներում հեռակա ուսուցման, և (կամ) լրացուցիչ կրթական ծրագրով վերապատրաստում անցնող ոստիկանության ծառայողների ներգրավման ավարտի մասին << ներքին գործերի նախարարության ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչությունը գրավոր իրազեկում է ուսումնական հաստատությանը, որից հետո վերսկսվում են դադարեցված ուսումնական պարապմունքները: